ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԴ 5-2024
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «8» փետրվար 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Սամվել Գևորգյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 1272-Ա հրամանով հաստատված հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 17-ի նիստի N 2 արձանագրությունն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 20-ի N 2416-Ա/2 հրամանը՝ որոշման «1148. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» բյուջետային ծրագրի «11001. Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառման շրջանակներում ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 94098100 (Իննսունչորս միլիոն իննսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն Հավելված N 5-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված N 1-ում և Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջել վճարել Պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ Պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից Պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. Պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 6-ի առանձին նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում 15 օրյա ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար մինչև ընթացիկ տարեվերջ Պետական մարմին ներկայացնել իրականացված Միջոցառումների վերաբերյալ բովանդակային հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 2-ի և Հավելված N 4-ի, ընդ որում ներկայացված հաշվետվությունը Պատվիրատուի կողմից ընդունվում է թերությունների բացակայության դեպքում կամ հայտնաբերված թերությունները Կատարողի կողմից անվճար վերացնելուց հետո,

Բովանդակային հաշվետվությունը ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.7. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.8. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրեսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. Միջոցառումների չանցկացման մասին Կատարողը պարտավոր է տեղեկացնել Պատվիրատուին մինչև միջոցառման սկիզբը:

2.4.11. Կատարողն իրավասու է ինքնուրույն կատարել միջոցառման իրականացման ժամկետների փոփոխություն, եթե այն իրականացվում է նույն եռամսյակում, իսկ միջոցառման իրականացման ժամկետներն այլ եռամսյակ տեղափոխվելու դեպքում պետք է ստանա Պատվիրատուի գրավոր համաձայնությունը:

2.4.12.Միջոցառման իրականացման վայրի այն փոփոխությունները, որոնք ենթադրում են հաստատված նախահաշվի ծախսային տողերի միջև 10 տոկոսից ավելի շեղում պետք է գրավոր համաձայնեցվեն Նախարարության հետ:

2.4.13. Միջոցառման նախահաշվում ոչ ֆինանսական ցուցանիշների փոփոխություն հնարավոր է միայն այն դեպքում, եթե այն չի հանգեցնում տվյալ միջոցառման համար նախատեսված ֆինանսական միջոցների ավելացման, որի դեպքում ևս անհրաժեշտ է Պատվիրատուի գրավոր համաձայնեցումը:

2.4.14. Պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ՝ մինչև հաջորդող տարվա հունվարի 15-ը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարը փոխանցվում է կազմակերպության հաշվեհամարին Հավելված N 5-ին համաձայն:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ

նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել Պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.2. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3. Պայմանագրի 6.1-ին և 6.2-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.4. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024թ. դեկտեմբերի 30-ն է:

7.2. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ**
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011005445 ՀՎՀՀ 02698732	ք. Երևան, Դեղատան 17 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018003153 ՀՎՀՀ 02508123
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Հ. Հակոբյան /ստորագրություն/ Կ.Տ	_____ Ս. Գեորգյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«8» փետրվար 2024 թ. կնքված
N ԱԴ 5-2024 պայմանագրի

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրային ոչ ֆինանսական ցուցանիշներ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	Արտադպրոցական դաստիարակություն	Մարզադպրոցի 57 խմբերում ընդգրկված 632 մանուկների և պատանիների հետ 29 դրույք մարզիչ-մանկավարժների կողմից ուսումնամարզական գործընթացի իրականացում, առողջության պահպանում ու ամրապնդում, նրանց կողմից ընտրված մարզաձևերում ունակությունների ձեռքբերում, մարզական հերթափոխի պատրաստումը	«Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ-ի կողմից մարզական հերթափոխի պատրաստում	Մարզադպրոցում պարապողների թվաքանակի աճ, մարզական բարձր արդյունքներ, արտադպրոցական ծառայությունների որակի բարելավում	30.12.2024 թ.	94098100

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Դեղատան 17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003153
ՀՎՀՀ 02508123

Տնօրեն՝
_____ Ա. Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«8» փետրվար 2024 թ. կնքված
N ԱԴ 5-2024 պայմանագրի

Կազմակերպության անվանումը ....
Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը ....

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

....

(եռամսյակ)

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշիչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխությունները ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյ. 1+սյ.2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյ.4-սյ.3)	Տարբերության պատճառը (սյ.2-ում նշված իրավական ակտերի հոդվածները և սյ.5-ում նշված տարբերության պատճառաբանությունը)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
Արտադպրոցական դաստիարակություն	Ուսումնամարզական պրոցեսի կազմակերպում, սպորտային մրցումների և այլ միջոցառումների անցկացում, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մանուկների ու պատանիների համար հավասար պայմանների ապահովում	սան, որից՝						
		տղա						
		աղջիկ						
		մարզչական դրույք						
		մարզիչների թիվ						
		խումբ, այդ թվում՝						

Մարզական արդյունք______________________
Կազմակերպության տնօրեն
Հաշվապահ

«.....» .... 2024 թ.

Հավելված N 3
«8» փետրվար 2024 թ. կնքված
N ԱԴ 5-2024 պայմանագրի

«11001. Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառումների ցանկ

	Միջոցառման անվանումը	Միջոցառման սկիզբը	Միջոցառման ավարտը	Միջոցառումների ընդհանուր բյուջեն՝ (ՀՀ դրամ)	Պետական բյուջեից ակնկալվող գումարը՝ (ՀՀ դրամ)
1	Մարզադպրոցի հունա-հռոմեական ըմբշամրտի բաց մրցաշար	1-ին եռամսյակ	1-ին եռամսյակ	199 600	199 600
2	Ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար նվիրված ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին	2-րդ եռամսյակ	2-րդ եռամսյակ	239 000	239 000
3	«Մարշալ Բաղրամյան» հունա-հռոմեական ըմբշամարտի բաց մրցաշար	2-րդ եռամսյակ	2-րդ եռամսյակ	199 600	199 600
4	Նորայր Մուշեղյանի անվան ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար	4-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	795 000	795 000
5	Նորայր Մուշեղյանի անվան հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի բաց մրցաշար	4-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	793 800	793 800
6	Արմեն Սիմոնյանին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար	4-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	795 000	795 000
	Ընդամենը			**3 022 000**	**3 022 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Դեղատան 17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003153
ՀՎՀՀ 02508123

Տնօրեն՝

_____Ս. Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 4
«8» փետրվար 2024 թ. կնքված
N ԱԴ 5-2024 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«11001. Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառման ցուցանիշների կատարման վերաբերյալ

Միջոցառման անվանումը՝ .....

Կատարման ժամկետը՝ .....

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Չափման միավորը	Պայմանագրով նախատեսված				Փաստացի			
			Միավորի քանակը	Օրերի թիվը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)	Միավորի քանակը	Օրերի թիվը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)
1										
2										
3										

	ԸՆԴԱՄԵՆԸ									

«....» _____2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____ /_____/
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 5
«8» փետրվար 2024 թ. կնքված
N ԱԴ 5-2024 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Առաջին եռամսյակ (ՀՀ դրամ)	Երկրորդ եռամսյակ (ՀՀ դրամ)	Երրորդ եռամսյակ (ՀՀ դրամ)	Չորրորդ եռամսյակ (ՀՀ դրամ)
1	Մարզադպրոցի հունա-հռոմեական ըմբշամրտի բաց մրցաշար	199 600			
2	Ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար նվիրված ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին		239 000		
3	«Մարշալ Բաղրամյան» հունա-հռոմեական ըմբշամարտի բաց մրցաշար		199 600		
4	Նորայր Մուշեղյանի անվան ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար				795 000
5	Նորայր Մուշեղյանի անվան հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի բաց մրցաշար				793 800
6	Արմեն Սիմոնյանին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար				795 000
	Ընդամենը Միջոցառման գումար	**199 600**	**438 600**		**2 383 800**
	Ընդամենը պահպանման գումար	**18 670 600**	**22 313 600**	**22 313 600**	**27 778 300**
	ԸՆԴԱՄԵՆԸ (աճողական)	**18 870 200**	**41 622 400**	**63 936 000**	**94 098 100**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Դեղատան 17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003153
ՀՎՀՀ 02508123

Տնօրեն՝
_____ Ս. Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 6
«8» փետրվար 2024 թ. կնքված
N ԱԴ 5-2024 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ 1

Մարզադպրոցի հունա-հռոմեական ըմբշամրտի բաց մրցաշար

N	Անվանումը	Չափման միավորը	Միավորի քանակը	Օրերի քանակը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)	Այլ աղբյուրներից ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)	Միավորի արժեքի հիմնավորումը
1	Սնունդ	անձ	37	1	2 000	74 000	x	68-Ա/2 հրաման
2	Սնունդ	անձ	5	2	2 000	20 000	x	68-Ա/2 հրաման
3	Ճանապարհածախս	անձ	38	2	250	19 000	x	ՄԵՑ
4	Ճանապարհածախս	անձ	9	2	700	12 600	x	ՄԵՑ
5	Մեդալ	հատ	40		1 500	60 000	x	68-Ա/2 հրաման
6	Հավաստագիր	հատ	40		350	14 000	x	68-Ա/2 հրաման
	ԸՆԴԱՄԵՆԸ					**199 600**		

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ 2

Ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար նվիրված ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին

N	Անվանումը	Չափման միավորը	Միավորի քանակը	Օրերի քանակը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)	Այլ աղբյուրներից ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)	Միավորի արժեքի հիմնավորումը
1	Սնունդ	անձ	44	1	2 000	88 000	x	68-Ա/2 հրաման
2	Սնունդ	անձ	6	2	2 000	24 000	x	68-Ա/2 հրաման
3	Ճանապարհածախս	անձ	30	2	450	27 000	x	ՄԵՑ
4	Ճանապարհածախս	անձ	26	2	500	26 000	x	ՄԵՑ
5	Մեդալ	հատ	40	1	1 500	60 000	x	68-Ա/2 հրաման
6	Հավաստագիր	հատ	40	1	350	14 000	x	68-Ա/2 հրաման
	ԸՆԴԱՄԵՆԸ					**239 000**		

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ 3

«Մարշալ Բաղրամյան» հունա-հռոմեական ըմբշամարտի բաց մրցաշար

N	Անվանումը	Չափման միավորը	Միավորի քանակը	Օրերի քանակը	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)	Այլ աղբյուրներից ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)	Միավորի արժեքի հիմնավորումը
1	Սնունդ	անձ	37	1	2 000	74 000	x	68-Ա/2 հրաման

2	Սնունդ	անձ	5	2	2 000	20 000	x	68-Ա/2 հրաման
3	Ճանապարհածախս	անձ	38	2	250	19 000	x	ՄԵՑ
4	Ճանապարհածախս	անձ	9	2	700	12 600	x	ՄԵՑ
5	Մեդալ	հատ	40		1 500	60 000	x	68-Ա/2 հրաման
6	Հավաստագիր	հատ	40		350	14 000	x	68-Ա/2 հրաման
	ԸՆԴԱՄԵՆԸ					**199 600**		

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ 4

Նորայր Մուշեղյանի անվան հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի բաց մրցաշար

ՀՀ	*Անվանումը*	*Չափման միավորը*	*Միավորի քանակը*	*Օրերի քանակը*	*Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)*	*Ընդամենը (ՀՀ դրամ)*	*Այլ աղբյուրներից ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)*	*Միավորի արժեքի հիմնավորումը*
1	Սնունդ	անձ	180	1	2000	360 000	x	68-Ա/2 հրաման
2	Սնունդ	անձ	12	2	2000	48 000	x	68-Ա/2 հրաման
3	Ճանապարհածախս	անձ	30	2	450	27 000	x	ՄԵՑ
4	Ճանապարհածախս	անձ	26	2	500	26 000	x	ՄԵՑ
5	Մեդալ	հատ	40		1500	60 000	x	68-Ա/2 հրաման
6	Հավաստագիր	հատ	40		350	14 000	x	68-Ա/2 հրաման
7	Գավաթ մեծ	հատ	10		9000	90 000	x	68-Ա/2 հրաման
8	Գավաթ միջին	հատ	10		7000	70 000	x	68-Ա/2 հրաման
9	Գավաթ փոքր	հատ	20		5000	100 000	x	68-Ա/2 հրաման
	ԸՆԴԱՄԵՆԸ					**795 000**		

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ 5

Նորայր Մուշեղյանի անվան ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար

ՀՀ	*Անվանումը*	*Չափման միավորը*	*Միավորի քանակը*	*Օրերի քանակը*	*Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)*	*Ընդամենը (ՀՀ դրամ)*	*Այլ աղբյուրներից ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)*	*Միավորի արժեքի հիմնավորումը*
1	Սնունդ	անձ	180	1	2 000	360 000	x	68-Ա/2 հրաման
2	Սնունդ	անձ	10	2	2 000	40 000	x	68-Ա/2 հրաման
3	Ճանապարհածախս	անձ	72	2	250	36 000	x	ՄԵՑ
4	Ճանապարհածախս	անձ	17	2	700	23 800	x	ՄԵՑ

5	Մեդալ	հատ	40		1 500	60 000	x	68-Ա/2 հրաման
6	Հավաստագիր	հատ	40		350	14 000	x	68-Ա/2 հրաման
7	Գավաթ մեծ	հատ	10		9 000	90 000	x	68-Ա/2 հրաման
8	Գավաթ միջին	հատ	10		7 000	70 000	x	68-Ա/2 հրաման
9	Գավաթ փոքր	հատ	20		5 000	100 000	x	68-Ա/2 հրաման
	ԸՆԴԱՄԵՆԸ					**793 800**		

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ 6

Արմեն Սիմոնյանին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի բաց մրցաշար

Հ/Հ	*Անվանումը*	*Չափման միավորը*	*Միավորի քանակը*	*Օրերի քանակը*	*Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ)*	*Ընդամենը (ՀՀ դրամ)*	*Այլ աղբյուրներից ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)*	*Միավորի արժեքի հիմնավորումը*
1	Սնունդ	անձ	180	1	2 000	360 000	x	68-Ա/2 հրաման
2	Սնունդ	անձ	12	2	2 000	48 000	x	68-Ա/2 հրաման
3	Ճանապարհածախս	անձ	30	2	450	27 000	x	ՄԵՑ
4	Ճանապարհածախս	անձ	26	2	500	26 000	x	ՄԵՑ
5	Մեդալ	հատ	40		1 500	60 000	x	68-Ա/2 հրաման
6	Հավաստագիր	հատ	40		350	14 000	x	68-Ա/2 հրաման
7	Գավաթ մեծ	հատ	10		9 000	90 000	x	68-Ա/2 հրաման
8	Գավաթ միջին	հատ	10		7 000	70 000	x	68-Ա/2 հրաման
9	Գավաթ փոքր	հատ	20		5 000	100 000	x	68-Ա/2 հրաման
	ԸՆԴԱՄԵՆԸ					**795 000**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Դեղատան 17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003153
ՀՎՀՀ 02508123

Տնօրեն՝
_____ Ա. Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ